



ՊԱՐԱԴԻԳՄԱ ԱՐՄԵՆԻԱ

*Խորհրդատվական և
հետազոտական ընկերություն*

Մեր Մասին



«Պարաօլիգամ Արմենիա» ՓԲԸ-ն հաշվապահական, հարկային խորհրդատվական, ինչպես նաև հետազոտական ընկերություն է: Այն հիմնադրվել է 2003թ-ի հուլիսին «Ահարոն Պարաօլիգամ» անվանումով Ահարոն Չիլինգարյանի կողմից, այնուհետև՝ 2008թ-ի մայիսին վերանվանվել է «Պարաօլիգամ Արմենիա»: Իր գործունեության ընթացքում ընկերությունը ձևավորել է երիտասարդ և դինամիկ թիմ, ինչպես նաև ձեռք է բերել հարուստ մասնագիտական փորձ՝ աշխատելով տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող և միջազգային, և տեղական ընկերությունների հետ: Ընկերությունում գերակայությունը տրվում է աշխատանքի որակին՝ առաջնահերթ կարևորելով հաճախորդների կարիքները և նրանց հետ հաստատված ամուր հարաբերությունները:



Առաքելություն

Առաքելությունն է տրամադրել պրոֆեսիոնալ, հետևողական որակյալ ծառայություններ և պարզ լուծումներ մեր հաճախորդներին ու պատվիրատուներին՝ առաջնորդվելով վստահության, անկախ խորհրդատվական ծառայությունների սկզբունքներով. դրա գրավականը համակարգային մոտեցումն է, որի կենտրոնում մեր աշխատակիցներն են, իսկ բաղադրիչներն են գիտելիքը, փորձը, նորի փնտրումը, սեփական կորպորատիվ ոճի զգացումը: Պարբերաբար վերանայելով գործարար շրջանակների պահանջները՝ մենք փնտրում և կիրառում ենք աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նոր գործիքներ, որոնք և թույլ են տալիս կարճ ժամանակահատվածում տրամադրել որակյալ ծառայություն:

Իր առաքելությունն իրագործելիս ընկերությունն առաջնորդվում է «Մոտեցումների ուրույն համակարգ» կարգախոսով:



Մեր թիմը



Ընկերության աշխատակազմը կազմված է խնամքով ընտրված, տարբեր մասնագիտական որակավորումներ ունեցող 15 աշխատակիցներից, ովքեր համախմբված են խնդիրներ լուծելու միասնական մոտեցմամբ: Առաջնորդվելով այս քաղաքականությամբ՝ ընկերությունը խրախուսում է աշխատակիցների վերաորակավորումները՝ ընդառաջելով և անմիջականորեն աջակցելով նրանց նախաձեռնություններում:

Ներկայումս աշխատակիցները մասնակցում են Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիայի բրիտանական մասնագիտական որակավորման դասընթացներին (ACCA), ինչպես նաև միջազգային ծրագրերով ձևավորված Հայաստանի մասնագիտական կառույցների որակավորման դասընթացներին: Վերապատրաստումները և այլ զարգացման ծրագրերը հանդիսանում են ընկերության ղեկավարության քննարկման մշտական առարկան՝ ներգրավված լինելով նաև աշխատակիցների անհատական զարգացման և գնահատման համակարգերում: Անձնակազմի աշխատանքն ուղղված է բավարարելու յուրաքանչյուր հաճախորդի յուրահատուկ կարիքները և լեզուների իմացությունը (ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն) ևս կարևոր գործիք է մեր թիմի գինանցում:



Մեր առավելությունը

Ժամանակի ընթացքում մենք
ճևապորել ենք խորը և
համակողմանի մոտեցումների
համակարգ, որը մեզ
հնարավորություն է տալիս հասնել
և մեր հաճախորդներին առաջարկել
ոչ թե թեորեստիկ, այլ իրապես
կիրառելի, խորը
վերլուծությունների վրա հիմնված
լուծումներ:



Ծառայություններ



- Հաշվապահություն
- Հարկային խորհրդատվություն
- Միջազգային հարկային խորհրդատվություն
- Իրավաբանական ծառայություններ
- Հետազոտություններ
- Սեմինարներ

Ավելի մանրամասն տեղեկատվության համար՝ սեղմեք այստեղ:

Փորձառության ուղորտները



- Հանքարդյունաբերություն
- Հեռահաղորդակցություն
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ
- Արդյունաբերություն (արտադրություն)
- Առևտրական ընկերություններ
- Հյուրանոցային ծառայություններ
- Առողջապահություն
- Գյուղատնտեսություն
- Բանկեր, ֆինանսական կազմակերպություններ
- Շինարարություն
- Հիմնադրամներ և հասարակական կազմակերպություններ
- Ավիացիա (օդանավակայան, այլ)
- Էլեկտրաէներգետիկա
- Կառուցապատում
- Կրթություն, գիտություն
- Պետական կառավարում

Համագործակցության այլ շրջանակներ



- **IFA (International Fiscal Association)**



- **ՍՄԲԱ՝ Ներառյալ աշխատանք Եվրասիական Տնտեսական Միության հանձնաժողովին կից խորհրդատվական կոմիտեի օրակարգով**



- **ՀՀԱԱ (Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա)**



- **Տնօրենների հայկական ինստիտուտ**



- **Doing Business**



- **Texas A&M University Law**

Հետադարձ կապ



 Հեռ./Ֆաքս (374 10) 53-15-67

Հեռ. (374 10) 53-15-59

 Էլ. հասցե՝ *office@paradigma.am*

 *www.paradigma.am*

 Հասցե՝ ՀՀ, Երևան, Մոսկոպյան 90/31

